ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ԱՐՑԱԽՈՒՄ

Տեսական ընդմիջումից հետո վերսկսեցին գործել մարզի մշակութային օջախները:

Արցախի և մայր Հայաստանի մշակութային կապերի ընդլայնման շնորհիվ ավելի հարուստ ու բովանդակալից է դարձել մարզի մշակութային կյանքը:

«Գարնան տոն»՝ այս նշանաբանով անցավ Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի շենքում կոմերիտմիության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեի նախաձեռնած բարեգործական համերգը: Հայաստանում երկրաշարժից տուժածներին օգնելու նպատակով կազմակերպված համերգին մասնակցում էին տեղի «Ուրարտու», կոշիկի ֆաբրիկայի «Վարարակն», քաղաքային մշակույթի տան «Արցախ», պիոներների և դպրոցականների տան «Արևիկ» վոկալ-գործիքային իճճնագործ անսամբլները և մարզում իրենց ժամանակավոր ծառայությունը անցկացնող ՍՍՀՄ ՆԳՄ ճենչական դպրոցների ուսկեդիրներ, որոնք հանդես եկան հեղինակային երգերի կատարմամբ: Ավարտից հետո մենք զրուցեցինք ·կոմերիտմիության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Արամ Աղամյանի հետ:

— Համերգներին մասնակցած անսամբլներից «Արցախը» անցյալ տարի հաջողությամբ հանդես է եկել Գորիսի շրջանի աշխատավորության առջև, և հանգանակված միջոցները փոխանցել սումգայիթցիների օգնության ֆոնդ, — ասաց նա:— Համերգը լուրջ փորձություն է մեզ համար: Մենք նպատակադրվել ենք այսուհետև էլ ավելի եռանդուն ու գործարար ընթացք տալ բարեգործական համերգներին, դրանցում ներգրավել թե մարզի, թե՛ Միության հանճարված անսամբլների, երաժիշտների: Համերգի դրամամուտքը՝ մոտ 700 ռուբլի, փոխանցվել է երկրաշարժից տուժածների ֆոնդ:

ՄԱՎՐ ՄԻՐԶՈՅԱՆ
ք. Ստեփանակերտ